սկզբնաց դեմ, նոյն աշխարհի եկեղեցականաց ընդունայն, դարշելի և վայրապար խաչակրութիւնէն ծագած է։ Իսկ արևելքի մէջ, մեր վրայ խօսելով, մեր եկեղեցւոյն դայթակղութիւնները մի միայն եկեղեցականաց ճշմարիտ եկեղեցական չըլլալէն, կրօնաւորներուն ճշմարիտ կրօնաւոր չըլլալէն, վանքերուն ճշմարիտ վանք չըլլալէն, վանականներուն ստոյգ վանական չըլլալէն, մէկ խօսքով, ազգային բարձր Նուիրապետութենէն մինչև յետին պաշտօնէութիւնը պաշտամանց սկզբունքները յետս ընդ դէմ յարգուելէն և բնաւ բանի տեղ չդրուելէն է. ասոր համար է՝ որ մեր արդի դարուն այսչափ անկարգութիւններ սպրդած են. ասոր համար է՝ որ ամեն վիճակ կամ գաւառ այսօր տակնուվրայ եղած է. ասոր համար է՝ որ կրօնքը կամ հաւատքը անմիտներու ձեռք խաղալիկ եղած է. աս ալ ըսեմ. ասոր համար է՝ որ բարիոք կհամարին շատերը աշխարհական եկեղեցականներ ունենալ քան կրօնաւոր։

Ո՛վ աստուած, մինչև երբ այս ապականութիւնը քու Եկեղեցւոյդ մէջ. ան է քու սիրած այդիդ. երբեմն Հրէաստանի սինագոկան այլ ապաղակաց անուանեցիր, ի՞նչ կըսես այսչափ դայթակղութիւններով լեցուն Եկեղեցւոյդ համար, այլ Ընտրեալ ազգ. ոչ երբէք. այլ քու պաշտօնեայքդ, քու հովիւներդ, քու հաւատարիմներդ։

Սուրբ Լուսաւորիչ կրօնաւորութեան հիմը պատուական քարերէ շինեց· իսկ արդի եպիսկոպոսներուն կամ քու գլխաւոր պաշտօնէիցդ ձեռք ամեն փայտ, խոտ և եղէգն, ըստ Առաքելոյն, անոր հիմն դրուեցան. ինչպէս պիտի կրնայ այս դիւրափշրելի և ջախջախնութիւններու վրայ հոյակապ շինք մը բարձրանալ։ Կրօնաւորութեան հիմը, ըստ սահմանագրութեան սուրբ Լուսաւորչի, Ընտօնի և Կրօնիդեայ ձեռք Գլակայ վանքին մէջ ոսկեղէն սկիզբ մը ունէր, իսկ մեր օրով կաւեղէն, Նաբուգոդոնոսորի արձանին նման՝ որուն գլուխը ոսկի և ոտքերը հող էին։ Ի՞նչպէս պիտի կրնայ այս կաւեղէն ոտքերուն վրայ քու պաշտամունքդ կանգուն մնալ։

Ի. Վ. Գ. Ա.

ՅՈՅՍ. ապրիլ. թիւ 46

ՊԱՏՄԱԿԱՆ

ՔԱՆԻ ՄԻ ԽՕՍՔ ՀՐԷՈՑ ԵՒ ՈՒՐԻՇ ՔԱՆԱՆԱՑԻ ԱԶԳԱՑ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԵԱՆԸ ԵՒ ԲՆԱԿՈՒԹԵԱՆԸ ՎԵՐԱՑ ԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՒ ԱՆԴՐԱԿՈՎԿԱՍԵԱՆ ԱՇԽԱՐՀԱՑ ՄԷՋ ԵՒՍ ԵՒ ԿԱՍՊԻՑ ԾՈՎՈՒՆ ՔՈՎԵՐԸ.(*)

Աստուածաշնչի Հորրորդ Թագաւորաց ԺԷ. Գլուխոյն 6 համարին և ԺԸ. 10 և 11 համարաց մէջ ասուած է, թէ՝ Ցուդայի Եզեկիա թագաւորին վեցերորդ տարուան և Իսրայէլացւոց Ոզիա թագաւորին 9 տարին (այն ատեն Իսրայէլացւոց թագաւորութիւն երկու բաժանուած էր, Իսրայէլի թագաւորութիւն որ 10 ցեղ կբաժանուէր, որոյ գլխա-

*) Սոյն այս յօդուածը Հրեայ Պարոն ԵուՔայ Եաբովլեվ Զեօնրոյ Ճանապարհորդին աշխատասիրութիւններէն է։ Երբ յանցելումս մայիս ամսոյ 22-ին նոյն Ճանապարհորդ Պարոնը եկած էր այստ ի Ս. Էջմիածին, ՄայրաՔաղաքս մատենադարանէն իւր ազգայնոց վերայ տեղեկութիւնք հաւաքելոյ եւանդեամբ, (բայց որովհետև Հայերէն չիմանայր, եւ միայն կը փնտուէր Հրեայերէն լեզուաւ գրուած մեռագիր, ուս-

ւոր քաղաքն էր Սամարիա, և Ցուդայի թագաւորութիւն՝ որ 2 ցեղ էր, և գլխաւոր քաղաքն էր Երուսաղէմ), Ասորեստանեայց Սաղմանասար թագաւորը յարձակուեցաւ Սամարիայի վրայ և գերի տարաւ Իսրայէլացւոց բոլոր տասը ցեղերը Ասեստան, և բնակեցուց զիրենք Խալախի կամ Խալխի (Հայ. Ցաղաթ), Ղաբորի (Ագովը) Գոզան գետի քովերը (Գոզան) և հին Մարաց քաղաքներուն մէջ. (720 տարի նախ քան զծն. Քրիստ.).

Այժմ ես կուզեմ հարևանցի հայեայք մի ձգել վերոյիշեալ յօդուածոց Ասուածաշնչին, Ասորեստանը պէտք չէ քննել մանրամասնաբար, որովհետև ամենուն յայտնի հին աշխարհ է. իսկ Խալախը կամ Խալխը ես կըկարծեմ թէ հին Քալխետան է, որ Ցունարէն կասուի Քոլխիս(*). Ի մասնիկը աւելցընելով. Հին Քալխիտայի տարածութիւնն էր Ակցիայի կուսակալութեան (Փ-ՀԷ-ԷՀ) մէկ մասը, բոլոր Կուրիան, Իմերէթի մէկ մասը մինչև Պաթում և Սև ծովը. Հին ատենները բազմաթիւ Հրէաներ բնակեցան Քալխիտա, մէկ ապացոյցն այն է՝ որ ինքնրնին Հրէայք կխոստովանին՝ որ հին մնացորդներն են գերի գնացած Սալմանասարի ձեռքով. որ այժմ մեծաւ մասամբ կըբնակին Իմերէթի, Մնկրելի մէջ. և լեռներու ու ձորերու Ռիոնի և Ցխէնիս – Ցխալի շրջս կողմը ըստ աւանդութեան իրենց պապերուն, Ուրիշ մէկ ապացոյց է մնացորդները Հրէից հին շինուածոց և Սինակոկայից (ժողովարանաց) ըստ ցուցման տեղ-

տի ծառնանայն վերադարձաւ աստի ի 24ն յունիս ամսոյ): զայս յօդուածս հանեցաւ տալ խմբագրու. Թեանս խնդրելով հրատարակել միջոցաւ Արարատոյ:

Այն անձը Ռուսիոյ Մինակ դաւառի նոյն անուամբ քաղաքին բնակիչներէն է. եւ 1867 Թուականէ ի վեր Փարիզի Իսրայելեան ընկերութեան յանձնարարութեամբ եւ Կովկասեան նահանգաց բարձրը. Մեծ Իշխան Փոխարքային հրամանաւ կը ճանապարհորդէ Կովկասի եւ մերձակայ սահմանաց մէջ ի հնուց մինչեւ ցայժմ իւր ազգայնոց վերայ այլ եւ այլ պատմական, վիպասանական եւայլն տեղեկութիւնք հաւաքելոյ համար: Ծ-Ն-Ի. Ս.

(*) Հայերէն՝ Կողբիս ասուածն է: Ծ-Ն. Խմբ.

ւոյն ժառանգական ինէ-ներուն և ժողովրդեան. Բայց յայնմանէ կ-ԷԷ- ըստ տեղական բարբառոյ կնշանակէ եղկիր Հրէից. վասն զի Կուրիա կամ Ռ-ԷԷ- Քարթլոսացւոց բարբառովը՝ Հրէայ կնշանակէ. ուստի և ասկից քանի մի լեռներ կկոչուին և այժմ Ռ-ԷԷ-- Մ-Ռ-, որ կնշանակէ Հրէից լեռ կամ անոր համար որ այնտեղ կրնակէին Հրէայք և կամ իրենց կպատկանէր. Հրէից այնտեղ գաղթելուն պատճառը՝ Թուրքաց, Պարսից և լեռնաբնակ ազգաց յարատև յարձակմունքէն է. նամանաւանդ որ նոքա մեծ նեղութիւն և չարչարանքներ կըկրէին անոնցմէ իրենց նախնեաց հաւատքը փոխելու համար. Նոքա ստիպուեցան Կուրիան թողուլ բարբարոսաց յարձակմունքներէն և Կովկասու ուրիշ կողմերը գաղթել. Շատերը ապաստանեցան Իմերէթիոյ և Մնկրելիոյ մէջ եղած ինէ-ներուն և եկեղեցեաց պաշտպանութեանը. Թէ՛ առաջ նոքա մեծաւ սիրով ընդունուեցան այդ իշխաններուն կողմանէ և մանաւոր հարկ կուտային, բայց վերջը իշխաններն ու եկեղեցիք ստրուկ ըրին զիրենք և քանի մի դար սաստիկ զրկանք կրեցին՝ մինչև որ բարեխնամ Ռուսիոյ Պետութիւնը ճորտերուն ազատութիւն տալով և Հրէաներն ալ ազատուեցան իրենց դառն վիճակէն. Իսկ Հրէաներէն շատերը՝ որք չէին ցանկար բաժանուիլ 'ի հայրենեաց և չէին կարող տանիլ այնչափ հալածանաց, ակամայ կամքը ստիպուեցան նոյն ժամանակի տիրող կրօնքը ընդունել և մնացին Կուրիոյ մէջ և խառնուեցան տեղական բնակչաց հետ.

Այժմ թէև Հրէաները չկան, բայց Կուրիա անունը մնացած է 'ի յիշատակ նոցա բնակութեան այնտեղ մինչև յայսօրս.

ԱԲՈՎՐ ԵՒ ԳՈՎԶԱՆ ԳԵՏ.

Պուխարիոյ մէջ բնակուող Հրէաները Գաղոմն գետը Ամուրտարիա է կասեն, և թէ Պուխարիան՝ Ղաբորն է. Եւրոպայի քանի մի ճանապարհորդները կհաստատեն թէ Ղաբոր և Գովզան գետերը կը գտնուին Ճարալ քաղաքի մօտ՝ որ Արաքսի վրան է Շիրվանի մէջ. Սարաբոնի կարծիքովը անոնք կը-գտնուին Տիգրիս և Եփրատ գետերու մէջտեղը. Քսենոփոն կասէ էլ – Ղաբոր. Երասխայ մէջ

կրթափի. իսկ Բէնեզը կպնդէ թէ Գողանը նոյն իսկ Գիզիկ – Օզանն է և կրգտնուի Հին Մարաստանի Բայի քաղաքին արևմտեան կողմը։ Պողոմէոսի կարծիքովը անունք Նիզիպի և Մասիս լերան մէջ տեղը կգտնուին։ Բայց որչափ ևս տարբեր լինին այս կարծիքները, ես կենթադրեմ որ Ղափորն ու Գողանը պէտք է լինին Հայաստանի սահմաններուն մէջ և կամ թէ Մարաստան, ուր բնակուած էին Հրէայք Սաղմանասարին բերած գերիները։ Հրէայ ճանապարհորդ Բինիմիամին Տուդելպէյ Սպանիոյ բնակիչ ճանապարհորդին պատմելովը, որ ԺԲ դարուն կէսերը ճանապարհորդած էր Ասիա, Ղափոր և Գաղոմն գետերուն քովերը մեծ պատերազմաց գաղթականութիւն կար, որ իւր թագաւորին կհպատակէր Ղևիի ցեղէն (Զլենի՞ թէ Շամբատին (Սմբատին) կհպատակէին՝ որ Բաղրատունեանց ցեղէն էր*)։

Վերոյիշեալ ճանապարհորդներէն զատ կը վկայեն նաև Հայոց մատենագիրները, որ շատ Հրէաներ գաղթած են և հաստատուած Հայաստանի մէջ։ Հայոց ուսումնական մէկ անձը Պ. Եղեանց իւր "Ներքին կեցութեան հին Հայաստանի Պատմաբանական Քննութիւն" անուանեալ գրքին 34 և 35 երեսներուն մէջ, և դարձեալ գիտնական Պ. Էմինը իւր "Գաղթականութիւն հին Հայաստանի" ասուած գրքին մէջ, զոր թարգմանած է Հայոց ԺԱ. դարու մատենագիր Ստեփաննոս Տարօնացիէն, գրքին 309 երեսին մէջ. կասեն թէ բազմաթիւ Հրէայք բնակուած են Հայաստանի զանազան քաղաքներուն մէջ, և յանուանէ Արտաշատի մէջ 9000 տուն, Երուանդաշատի մէջ 30000 տուն Հրէայ և 20000 տուն Հայ, Զարեհաւանի մէջ 8000 տուն, որ Բաղրևանդ նահանգին մէջ կրգտնուի, Զարիշատի մէջ 14000, Վանայ մէջ 18000, Հին Նախիջևանի մէջ 14000 տուն Հրէայք և 2000 Հայ, Վաղարշապատայ մէջ 8000 տուն Հրէայ, ընդ ամէն 103000 տուն Հրէայ, ՝ի բաց թողլով ուրիշ քաղաքները և գիւղերը, որոց մէջ նոյնպէս գտնուած են անտարակոյս շատ մը Հրէայք, որոց վերայ յիշատակեալ մատենագիրները յիշատակութիւն մի չեն բրած։

Երբ 4 դարուն մէջ Պարսից Շապուհ թագաւորը բաղմաթիւ զօրքով յարձակուեցաւ Հայաստանի վրայ, և հրով և սրով քարուքանդ ըրաւ զայն և մարդիկները կոտորեց, նոյն տարաբաղդ վիճակին ենթարկուեցան նաև Հրէաները։ Նախիջևանի մէջ Շապուհ 87000 տուն Հրէայ ժողովեց և Պարսկաստան գաղթեցուց և գերիները բնակեցուց Սուզի (Համատանի) և Սպահանի մէջ։ Նոյնպէս շատ Հայեր նոյն ժամանակը գերի տարուեցան Պարսկաստան։ Այսպիսի դառնապին պատահարը և հաղածանքը տեսնելով՝ Հայաստանի մէջ մնացած Հրէաներէն շատերը, գուցէ և Հայերէն, թշնամոյն սրէն և անգթութենէն ազատուելու համար, փախան Կովկասու լեռները և Տաղիստանի անմատչելի տեղերը ապաստանեցան։ Շատերն ալ Ասիոյ կուսակալութեան և Վրաստանի մէջ ապաւինեցան։

Թէ Արդեօք ի՞նչ քաղաքական դեր կրնային Հրէայք Հայաստանի երջանիկ ժամանակը, ի՞նչ սովորութիւններ ու կեանք ունէին, երկրագործութեամբ և արուեստներով կպարապէին, վաճառականութեան մէջ ի՞նչ ընթացք ունէին, սակայն վրայ շատ քիչ տեղեկութիւն կուտան Հայոց մատենագիրները։

ՄԵԴԱՑԻՈՑ ԿԱՄ ՄԱՐԱՑ ԵՐԿԻՐՆԵՐԸ.

Հին Մարաստանը զանազան ժամանակներ այլ և այլ երկիրներ ունէր, ինչպէս Ատրպատականը, Կիլանը և Շիրվանը, և մէկ ժամանակ կըտարածուէր մինչև Կասպից ծովուն դռները։ Շիրվանի Հրէաները կըհաստատեն, որ Շիրվանի Խանութիւնը բուն Մարաստանն է, և թէ հին Շամախի քաղաքը աթոռն էր Մարաց Դարեհ թագաւորին։ Ի հաստատութիւն իրենց ի հնումն բնակութիւն հաստատած լինելուն՝ Շիրվանի մէջ նոքա կը ցուցնեն հին գերեզմանատունը, և իրենց նախնեաց՝ որ Սաղմանասարէն գերի տարուեցան, հինաւուրց խրճիթները կամ տները, և թէ նոցա քով մնացած գրաւոր ապացոյցներուն զօրութեամբ Շամախիի մէջ կրնակուէին նոցա առաջնորդներն ու դասուարակները. և թէ նոքա չեն եղած Պաղեստինու մէջ ոչ Նաբուզոդոնոսորին Երուսաղէմ աւերած

(*) Ս. Խ. Դիրը Ն. Գրուխ ԽԲ

ատենը, և ոչ Սողոմոնի տաճարին կանգնուած ատենը Պարսից Կիւրոս Թագաւորին հրամանաւը, և ոչ դարձեալ Երուսաղէմի երկրորդ աւերման ատեն Տիտոսին ձեռքովը, հապա՝ Մարաստանը յայնժամ կրնակէին մինչև ցայսօր։ Կարողս Բիբլիէր, երևելի մատենագիր, իւր հռչակաւոր երկրաբանութեան վերայ յօրինած շարադրութեան Ժ. մասին մէջ՝ երես 239 առաջ կրերէ վերոյիշեալ Հրեայ Ճանապարհորդ Բենիամին Թուվեսբիի պատմութիւնը, թէ Խալիֆներու իշխանութեան ատեն ԺԲ. դարուն կէսերը բոլոր Հայաստանի, Վրաստանի, Տաղստանի և Շիրուանի մէջ բնակուող Հրէաները կը հպատակէին ի հոգևորս մէկ հրէայ թագաւորաձի՝ Դաւթի ցեղէն՝ Դանիէլ Պէն-խիզտայի անուամբ, որ Պաղտատի մէջ կը բնակուէր, և մահմետականները զինքը Տաւութ Պէն-Սայիտնա կանուանէին, որ կընշանակէ ըստ մահմետականաց "աղնիւ սերունդ Դաւթի"։ Հրէաները վերը յիշուած տեղերէն չէին կարող ընտրել իրենց համար գաստիարակներ և բարեւնիներ, մինչև որ այնպիսիները չունենային վաւերական վրկայագիրներ Արքայազն Դանիէլէն։ Նշանակուած էր Ազգապետ բոլոր վերոյիշեալ երկիրներու մէջ գտնուող գերեալ Հրէից, և նորա տուած վկայագիրներու մէջ նկարուած էր Դաւթի Թագաւորական ցեղին կնիքը (гербъ) Խալիֆայի կնքով վաւերացած։

Մարաստանի մէջ գտնուող Հրէայք երբեմն Հայաստանի, երբեմն Վրաստանի, Պարսկաստանի, Խազատաց, Արարատեան և Պաղտատու Խալիֆայից։

Վերջին ատենները նոքա շատ նեղութիւն ու հալածանք կրեցին Պարսից շահերէն, գլխաւորապէս Նատիր Շահէն. յետոյ գերի խնայով շատ չարչարանքներ ունեցան Տաղիսթանի և Կովկասու ժառանգական իշխաններէն, Խաներէն, Բէկերէն և Շամխալներէն։ Զկարողանալով տանել այնչափ դարեր իրենց վրայ հասած անտանելի նեղութիւնները, նոցանէ շատերը ջնջուեցան. իսկ ուրիշները ստիպուեցան իրենց հարց հաւատքը թողուլ և խառնուեցան լեռնարնակ ազգաց հետ։ Եւ ասոր հետևանքը այն եղաւ, որ այդ հին ատենները բաղմաթիւ Հրեայ գերիներէն եկած այժմ միայն 5000 տուն մնացած է, և այլ Կովկասեան և Անդրկովկասեան աշխարհաց մէջ ցիր և ցան եղած են, և մնացած են հաւատարիմ իրենց հին նահապետաց Աստուծոյն։

Եթէ կայ մէկ ազգ բոլոր աշխարհիս վերայ՝ որ պահպանած լինի իւր ազգային հաւատքը, կերպարանքը և կենցաղավարութիւնը, և այնչափ դարաւոր դժնդակ հալածանքներու և չարչարանքի ենթարկուած, անտարակոյս Հրէից ազգն է միայն։ Թէև Հայկեան ազգն ալ նման է Հրէից ազգին իւր նախկին ծագմամբն ու կեանքովը և նոյնպէս բաղմաթիւ տանջանքներ կրած է, բայց Հրէից չափ չէ. վասն զի Հայերը նեղութիւն կը կրէին զանազան ժամանակներ միայն իրենց մերձակայ եղող տէրութիւններէն և լեռնարնակ ազգերէն, իսկ Հրէաները անմեղ տեղը՝ բոլոր աշխարհիս վրայ եղող ազգերէն ու հաւատքներէն նեղուած ու չարչարուած են։

Դեռ 10–15 տարի առաջ Սաղմանասարը Հրէաները գերի չտարած, Թագղաթփաղասար յարձակուեցաւ Հիւսա-արևելեան կողմը Տիբերեա լճին, և գերի տարաւ երկու ցեղ Նեփթաղացւոց և Դանի և կէս ցեղը Մանասէի, և նոյն տեղը բնակեցուց. ուր 15 տարի վերջը Սաղմանասարի գերիները բնակուեցան։ (Դ. Թագաւորաց ԺԵ. գլուխ. համար 29. Քրոնիկոնի գլուխ Ե. համար 26) Նոցանէ շատերը յետոյ սփռուեցան բոլոր Ասիոյ և Ափրիկէի մէջ, այնպէս որ՝ ոչ իրենց հաւատակիցները Եւրոպայի մէջ և ոչ Եւրոպացի պատմաբաններն և մատենագիրները կարողացան իմանալ նոցա անյայտանալուն աղը։

Բուխանան, որ երևելի մատենագիր է, կը գտնէ զիրենք Արարիայի մէջ սևագոյն, Ասիայի մէկ քանի տեղերը՝ կարմրագոյն, Աֆղանիստանի մէջ զարմացաւ նա, որ գտաւ զիրենք Սաւուղի ցեղին մնացորդներէն։ Եւրոպայի ուսումնականներէն շատերը աշխատեցան գտնել 10 կորսուած ցեղերուն շաւիղը, ինչպէս Տոքթոր Կրանց, Ռոպէնսօն, Թոպիաս, Բաղէնզօն, Պօրէ, Ցիւփրէ, Սիր Կօրէ Ավզելեյ և ուրիշ շատերը՝ իրենց Ճանապարհորդութեան մէջ, և չէին գիտեր թէ՝ բաղմաթիւ ընտանիքներ գերեալ Հրէից մնացորդներէն այն է՝ 10 կորսուած ցեղերուն մէկ մասը կը բնակուէին, և այժմ ևս կը բնակուին Հայաստանի, Վրաս-

տանի և Կովկասեան լերանց՝ մինչև այս դարը եղած անմատոյց տեղերը։

Հայոց տարեգրաց խօսքովը*) կտեսնուի որ շատ ցեղեր հին աշխարհէն գաղթած են Հայաստան և Կովկասեան և Անդրակովկասեան աշխարհները։ 1) Քանանացւոց երկրէն զանազան ցեղեր փախան Հայաստան՝ երբոր Յեսու Նաւեան Քանանացւոց երկիրը տիրեց 1531 տարի Քրիստոսէն առաջ՝ Հայկազունեանց Թագաւորութեան Փառնաս կամ Փառնակ Նահապետին ժամանակը (Քանանիդաս) անունով զօրավարին առաջնորդութեամբը, որ Յեսու Նաւեանէն և Իսրայելացւոց ազգէն բաժանուած էր։

2.) Ասորեստանէն կուգան Հայաստան Ասորւոց Սենեքերիմ Թագաւորին երկու որդիքը Ադրամելէք և Սանասար, որ իրենց հայրը մեռուցին Նինուէի Նիսրեխի տաճարին մէջ**) 765 տարի Քրիստոսէն առաջ։ Նոցա ցեղէն առաջ կուգան հռչակաւոր նախարարաց ցեղերը Արծրունիք և Գնունիք, որոնց որ Արշակունեան Վաղարշակ Թագաւորը աբքունեաց մէջ պատուաւոր պաշտօններ տուաւ։ Արծրունիք՝ որ Ադրամելէքին սերունդներն են, միայն նախարարութիւն չէին ըներ. մասնդի վերջերը նոքա ոչ միայն Թագաւորեցին Վասպուրականի մէջ (Վանայ), հապա նաև Բիւզանդիոյ մէջ Կայսր եղած են։

3) 10,000 Մարք Տիգրան առաջինը բերաւ Հայաստան՝ Մարաց Աժդահակ Թագաւորը յաղթելէն յետոյ 565 տարի Քրիստոսէն յառաջ, և բնակեցուց Մասիս լերան արևելեան կողքը Գողթան գաւառին սահմաններուն մէջ մինչև Հին Նախիջևանայ բերդը. նոցա սերունդները մեծ պատիւ ունեցան և Թագաւորին երկրորդ կը համարուէին։

4.) Հնդիկներ, քուրմերու գաղթականութիւնը, ուր բնակուեցան 151 տարի Քրիստոսէն յառաջ. որ $4\frac{1}{2}$ դար մնաց Հայաստանի մէջ և յետոյ Տրդատ Թագաւորը տիրենք բնաջինջ ըրաւ՝ երբ Քրիստոնէութիւնը մտցուց Հայոց աշխարհը։

5.) Զինացիք, Պուղարք, Ալանք, և ուրիշները նոյնպէս բնակուեցան Հայաստանի մէջ։

Մեք կըտեսնենք այստեղ յառաջ բերուած պատմական տեղեկութիւններէն՝ որ հին աշխարհի շատ ցեղերը՝ որ Հայաստան գաղթած են զանազան ժամանակներ, յետոյ ուրիշ տեղեր գաղթեցին ժամանակի հանգամանքներէն ստիպուած կամ իրրև գերի, և կամ իրենք փախան թշնամեաց յարձակմունքներէն ազատուելու համար։ Այս հանգամանքներով ես կենթադրեմ՝ որ Իմերեթեցիք՝ որ այժմ Իմերեթիա կըբնակին. արդեօք Ամոլոհացւոց ցեղէն չե՞ն*) Քանանացւոց մէկ ցեղէն որ Կովկասու լերանց մէջ և Հայաստան փախան Յեսու Նաւեանի սրէն, ինչպէս որ վերը ասուած է. և թէ Աստուածաշնչի Ամոլոհացիք կոչմամբ շատ նման են այժմեան Իմերեթեցւոց. և կամ թէ Իմերեթիա անոր համար կոչուած է՝ այդ երկիրը իմ կարծիքով, որ գուցէ զանազան հանգամանքներէ ստիպուած Ամոլոհացիք Հայաստանէն այնտեղ գաղթելով՝ երկրին տուած են այդ անունը։

Նոյնպէս ես կըկարծեմ՝ որ Աստուածաշնչի Սինէյ (Սինէացիք) ասուածը՝ այժմեան Սինեթները կամ Սվանեթները լինին Սվանեթիայի մէջ, որ Իմերեթիայէն սահմանակից է։ Աստուածաշնչի Խէվի ասուածը, որ կըբնակուին այժմ Խիվա, Պուխարայի մօտ Կասպից ծովին արևելեան ափերու կողմը, պէտք է լինին Աստուածաշնչի Խեւացիքը։

Աստուածաշնչի Քէրիւ ասուածները ես կըկարծեմ՝ որ Քերկիզները պէտք է լինին (Գերգեսացիք). որ այժմ կըբնակուին անապատներու մէջ Կասպից ծովուն արևելեան կողմերը։

Եւ ով գիտէ՝ գուցէ այժմեան շատ մանր ցեղերը որ կըբնակուին Կովկասեան և Անդրակովկասեան լեռներու և ձորերու մէջ, հին Քանանացւոց սերունդներն և կամ ներքին Ասիոյ ազգաց սերունդները, ինչպէս որ վերը պատմաբանական եղանակաւ ցուցուցինք։

Այս ցեղերը շատ անգամ իրենց բնակութեան

(*) Ընդհանուր պատմութիւն Ստեփաննոս Տարօնացւոյ ԺԱ. դարու Պատմագրի, Թարգմանութիւն Լէմինի, երես 309 եւ Ներքին կեցութիւն հին Հայաստանի. Կ. Եղեանի, երես 34 եւ 35։

(**) Մարգար. Եսայեայ Լէ. գլուխ հատուած 38։

(*) 10 Գլ. համար 16. Գիրք ծննդոց. Հրեարէն Լեմորի։

տեղերը զանազան խառնվայրյը ժամանակներ փոխած են, և թողած են իրենց նախնեաց հաւատքն ու սովորութիւնները. և խառնուելով ուրիշ ցեղերուն հետ, իրենց մայրենի լեզուն կորուսած են, գրականութիւնը և աղգատոհմական վիկայագիրները իրենց հինաւուրց ծագմանը, որ անտարակոյս յափշտակուած են և կորուսուած զանազան յարձակմանց առեն և այն երկիրները աւերելու ժամանակ, այնպէս որ այժմ շատ դժուար է ճշդիւ որոշել նոցա ծագման աղբիւրը և դարաւոր գաղտնիքները երևան հանել։

Իսկ Հայաստան բնակութիւն հաստատող հրէաները և յետոյ Կովկաս և Պարսկաստան ցրուածները անպատճառ կորսուած 10 ցեղի մնացորդներն են՝ Առուոց Սաղմանասար թագաւորին տարած գերիները, որ մինչև ցայժմ կգտնուին Կովկասեան և Անդրակովկասեան երկիրներու մէջ բնակուող ուրիշ ազգաց հետ։

Հրեայ Ֆանադուրեան

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍՔ ԲՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ ՎՐԱՑ։

(Շարունակութիւն և վերջ)

Երկրիս վերայ օդոյ որպիսութիւնը (օդոյ որպիսութիւն ասելով կիմանամք նորա տաքութեան աստիճանը, և այս տաքութեան որքանութիւնը իմանում են առանձին գործիքով՝ որ է ջերմաչափ (термометръ.) ոչ թէ մէկ տեսակ է ամենայն տեղ, այլ մի և նոյն տեղ էլ մեծ փոփոխութիւն է ունենում։ Սրա պատճառն այն է, որ մէկ տեղի օդոյ վերայ մեծ ներգործութիւն կունենան կողմնակի պատճառները՝ ինչպէս հողմոյ ընթացքը, այն տեղ ջրի լինելը կամ չլինելը և այլն։

Երբ օդոյ իսկ որպիսութիւնը կը կամենան իմանալ, այն ժամանակ այն կողմնակի պատճառները կհեռացնեն, և մի քանի անգամ էլ փորձ կը փորձեն և միջին թիւը ցոյց կտայ իսկ որպիսութիւնը՝ եթէ կամենում են իմանալ մէկ օրուայ օդոյ որպիսութիւնը, պէտք է իւրաքանչիւր ժամ օդոյ տաքութիւնը առանձին գրելով և միջին թիւը գտնելով կիմանան մէկ օրուայ օդոյ որպիսութիւնը. նոյնպէս եթէ կամենան իմանալ տարուայ որպիսութիւնը առաջուայ պէս կիմանան. յետ այնորիկ մի քանի տարիք իրարու վրայ հաշուելով կիմանան այն տեղոյ բնական օդոյ որպիսութիւնը։ Աշխարհագրագիր վրայ գծով միաւորելով այն տեղերը՝ որոց օդոյ որպիսութիւնը միանման են, կձևացնէ մէկ ծուռ գիծ, որը կասուի ՀԱՎԱՍԱՐ։ Իզոտերմով իմացան որ ամենատաք երկիրներն են հասարակածի տակ եղած երկիրները։ Արևը մտնելուս օդը կը սկսի սառել մինչև ծագելը. իսկ ծագելուս դարձեալ կը սկսի տաքանալ և շատ կտաքանայ յետ կէս աւուր 2 կամ 3 ժամուն՝ բաց 'ի հասարակածից վասն զի հասարակածի օդը կէսօրին սաստիկ կտաքանայ։ Քանի որ օդը բարձրանալ, այնքան ցուրտ կսկսի և սրանից է որ արևադարձի բարձր լեռները գեղեցիկ տեսարան կձևաւորեն. ստորոտի մօտ կտեսնենք տաքութիւն ուղող բոյսեր, արմաւենի ծառեր, բանանի ծառեր և այլն, յետոյ խաղողի որթ, յետոյ բարեխառն գօտեաց բոյսեր, 'ի վերջոյ անտառք տեղերում կը սանին մամուռ և որբին (мохъ и лишай). բայց եթէ լեռը առաւել բարձր է լինում. այն ժամանակ լեռան գագաթը բոլորովին ձիւնով պատած է լինում, այն ձիւնը տաքութենից կը հալի և ստորոտի մօտ պրերի կամ լերանց ճեղքերի մէջ ժողովելով կը սառչին և կը ձևացնեն սառնոց կամ ՀԼԵՏՉԵՐ (глетчеры). այսպիսի սառնոցներ շատ կան Ալպեան լեռներում։

Օդոյ անհաւասար փոփոխութիւնից կը պատահին երկու գլխաւոր երևոյթներ, հողմ և օդերևոյթ կամ մետէորայ։ Եթէ օդոյ երկու կարգն էլ հաւասար տաքութիւն չունին, այն ժամանակ օդոյ հաւասարակշռութիւնը իրկորչի և կպատահի հողմ։

Հողմը ունի չորս գլխաւոր ընթացք կամ ճանապարհ՝ հարաւային, հիւսիսային, արևմտեան և արևելեան. հողմոյ սաստկութիւնն էլ զանազան է լինում. կայ թեթև հողմ որ մէկ վայրկենի մէջ 6